

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

«Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

15. 06. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Վ. Անտոնյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ս. Խալաթյանը, Ն. Սարգսյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը, Ա. Սարգսյանը - մարզպետի օգնականներ
- Լ. Դավլաթյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում՝

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց՝

- 1.Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Վ.Ասատրյանին, Տ. Բաղդյանին՝
Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ըստ տարածաշրջանների համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման կիսամյակային պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ: **/ժամկետ՝ 15 օր/**
2. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝
Հանձնաժողովային կարգով մեկ անգամ ևս ուսումնասիրել կարկտահարությունից տուժած համայնքների վիճակը և «ՏԿ և ԱԻ նախարարություն ներկայացնել ամբողջական տեղեկատվություն՝ հասցված վնասների չափի վերաբերյալ: **/ժամկետ՝ 2 օր/**
3. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝
Անհրաժեշտ հսկողություն սահմանել Վանաձորի մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքները ժամանակին և որակով կատարելու նկատմամբ:
4. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Ս. Խալաթյանին՝
Զանգվածային լրատվամիջոցներում տպագրված Լոռու մարզի համայնքներին վերաբերվող ցանկացած հրապարակում դարձնել քննարկման առարկա և անհրաժեշտության դեպքում արձագանքել կամ տալ պարզաբանումներ:
5. Մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստվածության բաժնի պետ Ս. Ղուբաթյանին՝
Անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքներ իրականացնել ամառային զորակոչը պատշաճ կարգով իրականացնելու ուղղությամբ՝ համագործակցելով տարածքային զինկոմիսարիատների և համայնքների ղեկավարների հետ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/